ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Կ. Ս. ԿՈՉՄՈՅԱՆ. Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում (1920—1970). ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1977, 357 էջ.

Սոցիալիստական հասարակության, բանվոր դասակարգի պատմության լուսաբանման համար կարևոր նշանակություն ունի քաղաքների ու գյուղերի, գործարանների ու ֆաբրիկաների, սովխոզների ու կոլտնտեսությունների պատմության ուսումնասիրությունը։ Մեզանում վերջին երկու տասնամյակներին այդ ասպարեզում նկատելի աշխատանք է կատարվել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում։ ՀՍՍՀ ԳԱ նախագահության 1961 թ. նոյեմբերի 15-ի որոշմամբ ստեղծվեց Սովետական Հայաստանի քաղաքների ու գործարանների պատմության մատենաշար։ Այդ մատենաշարով լույս են տեսել Կ. Կոչմոյանի՝ Լենինական, Կիրովական, Ալավերդի, Հոկտեմբերյան քաղաքների, Ֆ. Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի, Երևանի ալյումինի և կաշվի գործարանների պատմությանը նվիրված աշխատությունները։

Գրախոսվող աշխատության մեջ հեղինակը բացահայտել է Սովետական Հայաստանի քաղաքների զարգացման նախադրյալներն ու օրինաչափությունները, դրանց դերը հանրապետության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում, հայ ժողովրդի վերածննդի գործում։ Երևան քաղաքի պատմության ֆոնի վրա հեղինակը լուսաբանել է հանրապետության հին քաղաքների խոշորացման և նորերի առաջացման ու զարգացման ամբողջական պատմությունը։

Հեղինակը հաջողությամբ է լուսաբանել այնպիսի կարևոր պրոբլեմներ, ինչպիսիք են Արևելյան Հայաստանի քաղաքները նախասովետական տարիներին, արդյունաբերության զարգացումը և քաղաքների առաջացումը, հանրապետության քաղաքային բնակչության աճն ու զբաղվածությունը, քաղաքաշինությունը, կուլտուրայի, գիտության, առողջապահության, քաղաքային տնտեսության զարգացումը, բնակչության նյութական բարեկեցության աճը։

Մենագրության մեջ բարձրացված հարցերը Կ. Կոչմոյանը լուսաբանել է արխիվային նոր և հարուստ վավերագրերով, ինչպես նաև զանազան արժեքավոր աղյուսակներով, որոնց մեծ մասը կազմել է ինքը՝ իր իսկ հավաքած արխիվային փաստաթղթերի հիման վրա։ Ընդհանրացնող աղյուսակներում հեղինակը ներկայացրել է Հայաստանի բանվոր դասակարգի կազմում տեղի ունեցած հիմնական որակական և կառուցվածքային փոփոխությունները։

Աշխատության կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ այնտեղ տրված է կուսակցական և սովետական առավել աչքի ընկած գործիչների, քաղաքաշինության անվանի մասնագետների գործունեության ճշմարտացի պատկերը։

Հեղինակը ցույց է տալիս, որ չնայած ցարական Ռուսաստանի տիրապետության տարիներին համեմատաբար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին արտադրական հարաբերությունների զարգացման համար և Արևելյան Հայաստանն ընդգրկվեց կապիտալիստական արտադրության ոլորտը, իսկ արդյունաբերությունը որոշ վերելք ապրեց, այդուհանդերձ, նրա բնական հարուստ պաշարները հիմնականում մնացել էին անօգտագործելի։ 1913 թ. Հայաստանի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր 20,7 միլիոն ռուբլի, իսկ 1920 թ. այն իջավ մինչև 1,7 միլիոն ռուբլու։ Սովետական Հայաստանը ժառանգեց զավառական մի քանի քաղաք, հետամնաց տեխնիկայով մի շարք փոքր գործարաններ, սակավաթիվ բանվոր դասակարգ, աշխատավորների կյանքի ծանր պայմաններ, բնակչության անգրագիտություն և հետամնացություն։

Կ. Կոչմոյանը Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացումը իրավացիորեն դիտում է որպես հանրապետության քաղաքների առաջացման ու զարգացման նախադրյալ։ Սովետական Հայաստանն ապրելով սոցիալ-տնտեսական մեծ վերափոխումներ ու զարգանալով՝ առավել արագ տեմպերով, հետամնաց ագրարային երկրից դարձավ ինդուստրիալ հզոր հանրապետություն։ Այսպես, օրինակ, 1970 թ. արդյունաբերության ընդհանուր արտադրանքը

1913 թ. համեմատությամբ, ՍՍՀՄ-ում աճել է 92, իսկ Հայաստանում՝ 134 անգամ (էջ 44)։ Սովետական իշխանության 50 տարիներին (1921—1971) հանրապետության արդյունաբերության մեջ ներդրվեց 3,2 միլիարդ ռուբլի, կառուցվեցին 404 նոր խոշոր գործարաններ, վերակառուցվեցին և ընդարձակվեցին շուրջ 230 արդյունաբերական ձեռնարկություններ (էջ 73)։ Դրա շնորհիվ ստեղծվեց բազմաճյուղ արդյունաբերություն, իսկ վերջին 15 տարում հանրապետությունում զարգացան էլեկտրոնիկան, էլեկտրատեխնիկական սարքաշինությունը, ճշգրիտ մեքենաշինությունը, քիմիան, մանրէակենսաբանական արդյունաբերությունը։ Այսինքն, հիմնադրվեցին ժողովրդական տնտեսության տեխնիկական առաջադիմությունը որոշող ճյուղեր։

Ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում հայ ժողովրդի ձեռք բերած խոշոր հաջողությունները հեղինակն իրավացիորեն վերագրում է սովետական բազմազգ ժողովուրդների բաղմարնույթ համագործակցությանը և եղբայրական անշահախնդիր օգնությանը։ Նա ցույց է տալիս, որ եղբայրական օգնությունը, կուլտուրական, տնտեսական, ինչպես նաև գիտատեխնիկական մտքի նվաճումների փոխանակումը դարձել են սովետական ժողովրդի կյանքի հիմնական օրենքը։

Գրախոսվող աշխատության մեջ հեղինակը հաջողությամբ ցույց է տալիս, որ Երևանի տնտեսական զարգացումը և բաղմաճյուղ արդյունաբերության ստեղծումը նրան դարձրել են համապետական նշանակություն ունեցող քաղաք, որը բացառիկ դեր է կատարում հանրապետության ժողովրդական տնտեսության, քաղաքների ու շրջանների զարգացման գործում։ Առանց Երևանի, նրա հզոր արդյունաբերության չի կարելի պատկերացնել հանրապետության քաղաքների արդյունաբերության զարգացումը, ինչպես նաև գյուղի սոցիալ-տնտեսական վերափոխումները, որոնց վրա են խարսխվում աշխատավորության նյութական բարեկեցությունը և կուլտուր-կենցաղային պայմանները բարելավումը։ Երևանը ժամանակակից տրանսպորտի գրեթե բոլոր տեսակներով կապված է ՍՍՀՄ խոշոր քաղաքների և տնտեսական շրջանների հետ, ունի մատակարարման լայն ցանց, էներգետիկ հզոր բազա, բնակարանային ընդարձակ ֆոնդ, որակյալ բանվորական և ինժեներատեխնիկական կադրեր, նպաստավոր պայմաններ՝ արտադրության մասնագիտացման, կոոպերացման ու համակենտրոնացման համար։ Նա դարձել է հանրապետության գիտահետազոտական, առողջապահական հիմնարկների, բարձրագույն ու միջնակարգ դպրոցների, արվեստի ու գրականության զարգացման գլխավոր օջախը, հայ ժողովրդի մշակույթի իսկական կենտրոնը, որի ազդեցությունը տարածվում է ամբողջ հայության մշակութային կյանքի վրա։

Երևան քաղաքի պատմության ֆոնի վրա հեղինակը աշխատության մեջ մեծ տեղ է հատկացնում մեծ և միջին քաղաքների, քաղաքատիպ ավանների ստեղծման ու հետագա զարգացման պատմությանը։ Սոցիալիստական շինարարության տարիներին խոշորացան հին քաղաքները, առաջացան ու զարգացան շուրջ 50 նոր քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ, 80 բնակավայրերում ստեղծվեցին հանրապետական նշանակության արդյունաբերական օջախներ։ Այդ նոր քաղաքների և քաղաքատիպ ավանների պլանաչափ զարգացումը դանդաղեցրեց մարդկանց ներհոսքը դեպի Երևան և նպաստեց գյուղական շրջանների տնտեսական դերի աճին։

Այնուհետև, մենագրության հեղինակը հանգամանորեն կանգ է առնում նոր քաղաքներում արտադրողական ուժերի տարածքային տեղաբաշխման հարցերի վրա։ Սոցիալիստական շինարարության տարիներին Ալավերդին և Ղափանը դարձան Անդրկովկասի պղնձարդյունաբերության խոշոր կենտրոններ։ Լեռնահանքային արդյունաբերության կենտրոններ դարձան Շամլուղ և Ախթալա քաղաքատիպ ավանները։ Հոկտեմբերյան քաղաքում շարունակում են զարգանալ սարքաշինությունը, էներգետիկան, շինարարական ինդուստրիան և հաստոցաշինությունը։ Հրազդանը վեր է ածվել խոշոր էներգետիկ բազայի՝ Անդրկովկասի մասշտաբով։ Արովյան քաղաքում շարունակում է վերելք ապրել ապակու, քարի և մարմարի մշակման արտադրությունը, մանրէակենսաբանական արդյունաբերությունը։ Էջմիածինը դարձել է սննդի, սարքաշինական, քիմիական և տեղական արդյունաբերության կարևոր կենտրոններից մեկը։ Վերջին տասնամյակում Չարենցավանը, որը հանրապետության ամենաերիտասարդ քաղաքներից է, դարձել է գործիքաշինության, երկաթբետոնե կոնստրուկցիաների, լիզինի, ավտոպահեստամասերի արտադրության ճանաչված կենտրոն։ Սպիտակում գործում են հանրապետության մեջ միակ շաքարի և վերելակների գործարանները և այլ ձեռնարկություններ։ Վերջին տասնամյակում բուռն թափով զարգացավ Կամո քաղաքի էկոնոմիկան, ստեղծվեցին յուղի, պանրի, հանքային ջրերի, տրիկոտաժի, կաբելի և արտադրության այլ տեսակներ։ Գորիսում շահագործման հանձնվեց արդյունաբերական 14 ձեռնարկություն։ Ստեփանավանում գորգագործական, տրիկոտաժի, կոշիկի, կաթի-պանրի գործարաններից զատ վերջին տարիներին շահագործման հանձնվեց բարձր

հաճախականության էլեկտրասարքավորումների գործարանը։ Իշևան քաղաքում զարգացավ գորգագործությունը և փայտամշակման արդյունաբերությունը։ Գրքում հաջորդաբար նկարագրվում են հանրապետության նաև մյուս քաղաքների ու քաղաքատիպ ավանների արդյունաբերական և սոցիալ-տնտեսական դեմքը, զարգացման հեռանկարները։

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը բազմիցս անդրադառնալով քաղաքաշինության և քաղաքների ինդուստրացման հարցերին, հատուկ հանձնարարություններ են արել մինիստրություններին և գերատեսչություններին՝ փոքր ու միջին քաղաքների կապիտալ ներդրումներն ավելացնելու, բնակելի և հասարակական շենքերի շինարարության ծավալման և այլ հարցերի մասին։ Հեղինակը ներկայացնում է այն հսկայական քանակական և որակական փոփոխությունները, որ տեղի են ունեցել հանրապետության ազգաբնակչության կազմում։ Նա բազմաթիվ աղյուսակներով ցույց է տալիս քաղաքների բնակչության աճը և զբաղվածությունը։

Մենագրության հեղինակն անդրադառնում է նաև հանրապետության քաղաքների հատակագծման, նախագծային ինստիտուտների, շինանյութերի արդյունաբերության ու շինարարական ինդուստրիայի, քաղաքների կանաչապատման ու ջրային մակերեսների ստեղծման պատմությանը և բարձր է գնահատում քաղաքաշինության երախտավորներին։

Կ. Կոզմոյանը փաստական հարուստ նյութի հիման վրա մանրամասն կանգ է առնում հանրապետության քաղաքների կուլտուրական կյանքի, առողջապահության, բնակչության նյութական բարեկեցության աճի, քաղաքների կոմունալ-կենցաղային սպասարկման, տրանսպորտի տարբեր տեսակների ստեղծման, կապի և ճանապարհաշինության զարգացման հարցերի վրա։ Գրքի վերջում համառոտակի տրված են քաղաքների զարգացման հիմնական հեռանկարները։

Արժեքավոր այս աշխատությունը, սակայն, զերծ չէ նաև թերություններից և վրիպումներից։ Գրքի որոշ գլուխներում նկատվում է ձգձգվածություն, չափից ավելի տեղ է հատկացված քաղաքների տնտեսության քննությանը, հատկապես իշխում են արդյունաբերությանը վերաբերող նյութերը։ Մենագրության մեջ տեղ են գտել կրկնություններ և աշխատության բնույթին ոչ համապատասխան մանր փաստեր ու թվական տվյալներ։ Օգտակար կլիներ, որ ավելի շատ տեղ հատկացվեր քաղաքաշինարարների կոլեկտիվների ու մասնագիտական ջոկատների հերոսական աշխատանքին։

ՀԱՅԿԱԶ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր